Մրցույթի հայտարարություն

« ՀՀ Գեղարքունիքի մարզի Դպրաբակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար

Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության, տնօրենի նշանակման և բողոքարկման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 50-րդ կետի համաձայն հայտարարվում է մրցույթ՝

« **ՀՀ Գեղարքունիքի մարզի Դպրաբակի միջնակարգ** » ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.
2) հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր).
3) «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 25-րդ և 27-րդ մասերով սահմանված հիմքերի բացակայությունը:

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ լիազոր մարմնի ղեկավարի անունով (ձև N 2):.
2) անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.
3) հաստատության ղեկավարման իրավունքի՝ հավաստագրի պատճենը.
4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով.
5) ինքնակենսագրություն (ձև N 3).
6) սույն կարգի 16-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հանդիպումների արձանագրությունները:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ, իսկ էլեկտրոնային եղանակով փաստաթղթերը ներկայացնելու դեպքում՝ բնօրինակները ներկայացնել մրցույթի օրը:

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչությունում (**ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7** հեռ. 060-65-06-25, 098-44-40-98,) 2026 թվականի հունիսի 17-ից մինչև հուլիսի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9^{00}-ից մինչև ժամը 17^{00}-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

«էլեկտրոնային դիմումներն և պահանջվող փաստաթղթերն ուղարկել gegharkunik.qartughar@mta.gov.am էլեկտրոնային փոստի հասցեին և տեղադրել կրթության կառավարման տեղեկատվական համակարգում ձևավորված /https://my.emis.am/ հարթակում»: